


Կենսանվտանգության ապահովման ոլորտի ինստիտուցիոնալ մեխանիզմների արդիականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Վարդանյան Բագրատ Լ.

Հայցորդ, Քաղաքագիտության ամբիոն, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ,
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0003-4908-9731>
bagrat.vardanyan@ysu.am

ՀՏԳ՝ 323.2; EDN: GSMVOU

DOI: 10.58587/18292437-2026.1-31

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ կենսանվտանգություն, կենսաբանական սպառնալիք, կառավարման կենտրոնացված համակարգ, երկակի նշանակության հետազոտություն, կենսատեխնոլոգիա

Проблемы модернизации институциональных механизмов обеспечения биологической безопасности в РА Варданян Баграт Л.

*Соискатель кафедры Политологии, факультет Международных отношений
Ереванский государственный университет (Ереван, РА)*

Аннотация. В современном мире архитектура национальной безопасности государств подвергается радикальным трансформациям, в центре которых все чаще оказываются нетрадиционные угрозы, в частности — риски биологического характера. Нынешние темпы глобализации, стремительное развитие биотехнологий, доступность исследований «двойного назначения», а также пандемические потрясения последних лет сделали очевидным тот факт, что предотвращение и нейтрализация биологических угроз требуют не только профессионального потенциала, но и четких, гибких и эффективных механизмов государственного управления. В этом контексте серьезный научный и практический интерес представляет изучение форм и особенностей деятельности органов системы государственного управления в сфере обеспечения биологической безопасности, поскольку именно институциональные структуры определяют оперативность и адекватность реагирования государства в кризисных ситуациях. Роль системы государственного управления в процессе эффективного противодействия биологическим угрозам носит всеобъемлющий характер, включая в себя широкий спектр направлений: от правового регулирования до общественной коммуникации, от финансирования до международного сотрудничества. Следовательно, их реформирование и модернизация являются одним из ключевых условий обеспечения безопасности государства в условиях будущих пандемий и биологических угроз.

Ключевые слова и словосочетания: биологическая безопасность, биологическая угроза, централизованная система управления, исследования двойного назначения, биотехнология

Challenges of Modernizing Institutional Mechanisms of Biosafety Assurance in the RA Vardanyan Bagrat L

*Postgraduate student of the Political Science Department, Faculty of International Relations
Yerevan State University (Yerevan, RA)*

Abstract. In the modern world, the national security architecture of states is undergoing radical transformations, at the center of which non-traditional threats—particularly risks of a biological nature—increasingly appear. The current pace of globalization, the rapid development of biotechnologies, the accessibility of “dual-use” research, as well as the pandemic shocks of recent years, have made it evident that the prevention and neutralization of biological threats require not only professional capacity but also clear, flexible, and effective mechanisms of public administration. In this context, the study of the forms and characteristics of the activities of public administration bodies in the field of biosafety assurance is of significant scientific and practical interest, as it is the institutional frameworks that determine the timeliness and adequacy of state response in crisis situations. The role of the public administration system in the process of effectively countering biological threats is comprehensive, encompassing areas ranging from legal regulation to public communication, and from financing to international cooperation. Therefore, their reform and modernization constitute one of the key conditions for ensuring state security in the face of future pandemics and biological threats.

Keywords & phrases: biosafety, biological threat, centralized management system, dual-use research, biotechnology

Ներածություն

Պետական կառավարման համակարգի մարմինները առանցքային դեր են զբաղեցնում կենսաբանական սպառնալիքների դեմ ուղղված պայքարի գործընթացում, քանի որ հենց այդ մարմիններն են սահմանում այն կանոնները, որոնցով բաշխվում են ռեսուրսները, ամրագրվում են առաջնահերթությունները և համակարգվում են հիմնական դերակատարների գործողությունները: Գլոբալիզացված աշխարհում կենսաբանական սպառնալիքները շատ արագ դուրս են գալիս մեկ պետության սահմաններից և պահանջում են կառավարությունների, գիտական կազմակերպությունների և մասնավոր հատվածի համաձայնեցված գործողություններ [13]: Այս համատեքստում պետական մարմինները կարող են հանդես գալ որպես նորարարությունների խթանիչներ կամ հակառակը՝ դառնալ բյուրոկրատական խոչընդոտների աղբյուր: Վերջին հաշվով պետական կառավարման համակարգը ձևավորում է ողջ ոլորտի զարգացման հեռանկարը՝ ստեղծելով կայունության մթնոլորտ կամ, հակառակը, առաջացնելով նոր ռիսկեր:

Կենսաբանական սպառնալիքներին արդյունավետ հակազդման համատեքստում պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության առանցքային կողմը թերևս երկարաժամկետ ռազմավարությունների մշակման ունակությունն է, որոնք ընդգրկում են ոչ միայն ճգնաժամային փուլերը, այլև դրանից դուրս ընթացող զարգացումները: Արտակարգ իրավիճակների պայմաններում ընդունված կարճաժամկետ որոշումները հաճախ կարող են թողնել բացասական ազդեցություն, եթե չեն ընդգրկվում ավելի լայն ռազմավարական ծրագրերի մեջ [5]: Առանցքային խնդիրներից մեկն ազգային շահերի համադրումն է համաշխարհային շահերի հետ, քանի որ որևէ պետության կողմից կենսաբանական սպառնալիքները վերահսկելու անկարողությունը կարող է անդրադառնալ նաև մյուս երկրների վրա:

Հարկ է նշել, որ պետական կառավարման համակարգի մարմինները ձևավորում են ոչ միայն ռազմավարական օրակարգը, այլև հանրային վերաբերմունքը կենսաբանական սպառնալիքների նկատմամբ: Մի կողմից պետությունը կարող է հանրահռչակել այդ սպառնալիքներին հակազդման նպատակով իրականացվող միջոցառումների անհրաժեշտությունը, բացատրելով դրանց կարևորությունը հասրակության առողջության և պետության անվտանգության համար: Մյուս կողմից, իշխանությունների անարդյունավետ քաղաքականության դեպքում հաճախ ձևավորվում է սկեպտիցիզմ, երբ հասարակությունը չի վստահում պաշտոնական հայտարարություններին և մերժում է կառավարու-

թյան գործողությունները: Այսպիսի իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ քաղաքական ինստիտուտները և կառավարման մարմինները գործում են ոչ թափանցիկ և չեն ներկայացնում իրենց որոշումները հիմնավորող փաստարկներ [4]:

Կենսատեխնոլոգիաների արագ զարգացումը, մասնավորապես գենային ինժեներիայի և սինթետիկ կենսաբանության ոլորտի նվաճումները մարդկության առաջ բացում են հսկայական հնարավորություններ, սակայն միաժամանակ պահանջում են չափազանց մանրակրկիտ կարգավորում, քանի որ չարամիտ մարդիկ կամ ահաբեկչական կազմակերպությունները կարող են փորձել կենսաբանական գիտության նվաճումները օգտագործել հանցավոր նպատակներով: Ուստի քաղաքական ինստիտուտները պարտավոր են մշտապես վերահսկել ոլորտի զարգացումը և ձևավորել համապատասխան պաշտպանական մեխանիզմներ: Լիցենզավորման խստացումը, լաբորատորիաների վերահսկողությունը, էթիկական փորձաքննությունների անցկացումը մեծ քեռ են պետական կառույցների համար, սակայն դրանց բացակայությունը կարող է հանգեցնել կենսաբանական պատահարների և ահաբեկչության: Միևնույն ժամանակ չափազանց խիստ վերահսկողությունը կարող է դանդաղեցնել գիտական առաջընթացը, ինչը կարևոր նշանակություն ունի կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարելու համար [12]: Այս պարադոքսը ստիպում է քաղաքական ինստիտուտներին որոնել հավասարակշռված մոտեցումներ:

Ժամանակակից կենսաբանական սպառնալիքների պայմաններում որոշումների կայացման ներքին մեխանիզմներն ստանում են առաջնահերթ նշանակություն: Խորհրդարանները և այլ ներկայացուցչական մարմինները պետք է արձագանքեն գիտական համայնքի առաջարկներին և ձևավորեն այնպիսի օրենսդրական դաշտ, որը հնարավորություն կտա արագ և արդյունավետ կերպով արձագանքել կենսաբանական սպառնալիքներին:

Գործադիր իշխանությունը պետք է վերլուծի ստացվող տվյալները, որոշի ռազմավարական առաջնահերթությունները և իրականացնի ոլորտի գործնական կառավարումը: Մասնավորապես, գործադիր իշխանության որոշ մարմիններ պատասխանատու են ռիսկերի գնահատման և կանխատեսման, մյուսները՝ թեստավորման և առողջապահական աջակցության, իսկ երրորդները՝ բնակչության իրազեկման համար: Գործառնությունների հստակ տարանջատումը մեծացնում է կենսաբանական սպառնալիքների դեմ արդյունավետ պայքարելու հավանականությունը: Իսկ երբ կառույցները կրկնում են միմյանց գործառնությունները կամ մրցում են

բյուջետային միջոցների համար, համակարգը խափանվում է, և նույնիսկ ամենաարդիական տեխնոլոգիաները չեն գործում լիարժեք արդյունավետությամբ: Ինչ վերաբերվում է դատական համակարգին, ապա այն պետք է գործի որպես իրավական երաշխավոր և քաղաքացիական իրավունքների պաշտպան՝ հատկապես կարանտինային կամ արտակարգ միջոցառումների կիրառման դեպքում [3]:

Այսպիսով, կենսանվտանգության ապահովման ոլորտի կառավարումը իր բնույթով բազմաշերտ է և հատվում է առողջապահության, գյուղատնտեսության, բնապահպանության, արտաքին քաղաքականության, պաշտպանության և այլ ոլորտների հետ: Հետևաբար, կառավարման համակարգի օպտիմալ մոդելի ընտրությունը դառնում է առանցքային հարց ցանկացած պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար:

Կենսանվտանգության ապահովման ոլորտի կառավարման միջազգային փորձը

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Կենսանվտանգության ապահովման ոլորտում ԱՄՆ-ի հիմնական ռազմավարական փաստաթուղթը կենսապաշտպանության ազգային ռազմավարությունն է: Այն ընդունվել է 2022 թ. հոկտեմբերին: Այս փաստաթղթով սահմանվում են կենսանվտանգության ապահովման ոլորտում ԱՄՆ պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև կենսաբանական սպառնալիքներին արդյունավետ հակազդելու ճանապարհները:

Ռազմավարությամբ ամրագրվում է նաև կենսանվտանգության ապահովման ոլորտում ԱՄՆ կառավարության առանձին մարմինների գործառնությունները, որոնք ռազմավարությամբ սահմանված նպատակներից կախված կարող են լինել հիմնական կամ աջակցող: Մասնավորապես՝

ԱՄՆ ազգային անվտանգության խորհուրդը հանդիսանում է ոլորտի ռազմավարական-քաղաքական համակարգման գլխավոր մարմինը: Այն Ձևավորում է կենսանվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության ընդհանուր ռազմավարական ուղղությունները, նախաձեռնում և համակարգում է համատեղ գործողությունների ծրագրեր՝ կենսաբանական սպառնալիքներին վաղ արձագանքման նպատակով, դիտարկում է կենսանվտանգության ապահովման ոլորտում գործընկեր երկրների ընդլայնման հնարավորությունները՝ հաշվի առնելով արտաքին քաղաքական առաջնահերթությունները, ինչպես նաև մշակում է ճգնաժամային իրավիճակների արձագանքման

և վերականգնման գործողությունների պլաններ և քաղաքական փաստաթղթեր:

Գիտության և տեխնոլոգիաների քաղաքականության գրասենյակը ազգային անվտանգության խորհուրդի հետ համատեղ իրականացնում է կենսանվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության ընդհանուր ռազմավարական ուղղությունների մշակման, ինչպես նաև կենսաբանական սպառնալիքներին վաղ արձագանքման նպատակով համատեղ գործողությունների նախաձեռնման աշխատանքները՝ ապահովելով, որ դրանք հենվեն առաջատար գիտատեխնոլոգիական լուծումների վրա:

ԱՄՆ Պետդեպարտամենտը կենսանվտանգության ապահովման ոլորտում արտաքին-քաղաքական հիմնական ուղեկիշների սահմանման և բազմակողմ միջազգային համագործակցության համար պատասխանատու գերատեսչությունն է: Ղեկավարում է կենսաբանական սպառնալիքներին վերաբերվող տվյալների փոխանակության միջազգային ընթացակարգերի զարգացման, գլոբալ առողջապահական անվտանգության ապահովման, կենսաբանական զենքի մասին կոնվենցիայի և կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարի ՄԱԿ-ի մեխանիզմների ամրապնդման, ինչպես նաև գործընկեր երկրների լաբորատոր և ինստիտուցիոնալ կարողությունների աջակցման գործընթացները:

Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտը հանդիսանում է կենսանվտանգության ապահովման ոլորտում հանրային առողջության պահպանման, կենսաբանական սպառնալիքներին ուղղված բժշկական հակազդման և առողջապահական ենթակառուցվածքների զարգացման համար պատասխանատու մարմինը: Ապահովում է կենսաբանական սպառնալիքների գեոմոնային հաջորդականության որոշման և տվյալների փոխանակման համակարգերի զարգացումը, պատվաստանյութերի և թերապևտիկ միջոցների նախագծումը, արտադրությունը և բաշխումը, ներքին առողջապահական համակարգի պատրաստվածության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև առողջապահական կարիքների գնահատումը և մատակարարման շղթաների անընդհատությունը:

Ներքին անվտանգության դեպարտամենտը ղեկավարում է կենսաբանական սպառնալիքների հնարավոր հետևանքների գնահատման գործընթացը, մասնավորապես՝ դրանց կանխատեսման, մոդելավորման և վաղ արձագանքման կարողությունների զարգացումը, ինչպես նաև լաբորատոր կենսաապահովության խաթարման և կենսաբանական պատահարների ժամանակ համակարգված արձագանքի ապահովումը:

Պաշտպանության ղեկարարամենտը հանդիսանում է կենսանվտանգությունը ռազմական անվտանգության հետ կապող հիմնական օղակը: Աջակցում է գլոբալ կենսանվտանգության ապահովման, միջազգային ընթացակարգերի մշակման և ինտեգրման, գործընկերերի լարորատոր կարողությունների ամրապնդման, կենսաբանական զենքերի հայտնաբերման և վերացման, ինչպես նաև կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարի համար անհրաժեշտ ռազմավարական պաշարների պլանավորման ծրագրերին:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնը (CDC) հանդիսանում է լարորատոր կենսապահովության և համաճարակաբանական հսկողության համար պատասխանատու հիմնական մասնագիտական մարմինը: Մասնավորապես, գործարկում է վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և վերահսկման համակարգեր, որոնց միջոցով գնահատում է վարակի տարածման միտումները և տվյալները տրամադրում է կառավարությանը՝ քաղաքական-կառավարչական որոշումների ընդունման համար, ինչպես նաև ստեղծում է լարորատոր կենսապահովության չափանիշներ և ուղեցույցներ, որոնք սահմանում են տարբեր մակարդակներում դասակարգված լարորատորիաներին ներկայացվող պահանջները և առավել վտանգավոր պայթուցիկների հետ իրականացվող աշխատանքների առանձնահատկությունները: Իրականացնում է նաև լայնածավալ կրթական, իրազեկման և վերապատրաստման ծրագրեր, մասնավորապես՝ համաճարակաբանների և լարորատոր մասնագետների ուսուցում և սերտիֆիկացում, ինչպես նաև մշակում է հանրամատչելի, բայց գիտական տվյալների վրա հիմնված հաղորդագրություններ՝ համաճարակների և կենսաբանական այլ սպառնալիքների վերաբերյալ: Կենտրոնը գործում է Առողջապահության և սոցիալական ծառայությունների ղեկարարամենտի ենթակայության ներքո:

Առողջապահության ազգային ինստիտուտը նույնպես գործում է Առողջապահության և սոցիալական ծառայությունների ղեկարարամենտի ենթակայության ներքո և հանդիսանում է ԱՄՆ կենսաբժշկական և հանրային առողջապահական հետազոտությունները համակարգող և ֆինանսավորող հիմնական պետական հաստատությունը: Առողջապահության ազգային ինստիտուտը չունի վերահսկողական կամ օպերատիվ լիազորություններ, բայց փոխարենը ձևավորում է ԱՄՆ կենսանվտանգության ապահովման համակարգի գիտատեխնոլոգիական հիմքերը: Մասնավորապես, իրականացնում է վարակիչ հիվանդությունների և բարձր ռիսկայնություն ունեցող պայթուցիկների հիմնարար ուսումնասիրություն, պատվաստանյութերի և

հակավիրուսային դեղամիջոցների նախնական մշակում, ստեղծում է ախտորոշիչ թեստերի տեխնոլոգիական հիմքերը, աջակցում է գիտնականների ուսուցման ծրագրերին և կազմակերպում է համատեղ հետազոտություններ տարբեր երկրների լարորատորիաների հետ:

ԱՄՆ Գյուղատնտեսության նախարարությունը հանդիսանում է կենսանվտանգության ապահովման ոլորտում կենդանիների, բույսերի և սննդի անվտանգության ապահովման հիմնական պատասխանատու մարմինը: Մասնավորապես, պատասխանատու է գյուղատնտեսության, կենդանիների և բույսերի առողջության համար վտանգ ներկայացնող կենսաբանական սպառնալիքների վաղ հայտնաբերման, բուսական վնասատուների մոնիտորինգի իրականացման, ինչպես նաև կենդանիների շրջանում և նրանց միջոցով տարածվող վարակիչ հիվանդությունները կանխարգելելու համար: Գյուղատնտեսության Նախարարությունը պատասխանատու է նաև ագրոլարորատորիաներում կենսապահովության չափանիշների ներդրման և գյուղատնտեսական ենթակառուցվածքների պաշտպանության համար: Համագործակցում է դաշնային և միջազգային գործընկերների հետ՝ սննդային շղթայի շարունակականությունը, կենդանիների և բույսերի շրջանում վարակիչ հիվանդությունների զսպումը և տնտեսության կենսական հատվածի արագ վերականգնումը ապահովելու նպատակով:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID) վերապահված է գլոբալ առողջապահական անվտանգության ապահովմանը և կենսանվտանգության ապահովման ոլորտում գործընկեր երկրների կարողությունների զարգացմանը աջակցելու հիմնական պատասխանատվությունը: Մասնավորապես, գործակալությունը պատասխանատու է գործընկեր երկրներում հիվանդությունների վաղ հայտնաբերման համակարգերի, լարորատոր կարողությունների և հանրային առողջապահական կառավարման մեխանիզմների ամրապնդման համար՝ կենսաբանական սպառնալիքներին արդյունավետ հակազդեցություն ապահովելու նպատակով: Համաճարակների ժամանակ մասնակցում է նաև գլոբալ ֆինանսավորման և տեխնիկական օգնության մոբիլիզացիային՝ համակարգելով դոնորների, միջազգային կազմակերպությունների և կառավարությունների միջև առողջապահական անվտանգության երկարաժամկետ ներդրումները:

Հետաքննությունների դաշնային բյուրոն (FBI) պատասխանատու է կենսաբանական միջադեպերի հետաքննության և դրանց ծագման պատճառների բացահայտման կարողությունները զարգացնելու համար, պարզելու՝ թե արդյոք տեղի ունեցածը դիտավորյալ հարձա-

կում է, պատահական արտահոսք, թե բնական բռնկում: Այն պատասխանատու է նաև կենսաբանորեն վտանգավոր նյութերի ապօրինի շրջանառության, չարտոնված գիտական գործունեության և կասկածելի մատակարարման շղթաների բացահայտման համար՝ կանխելու պետական կամ ոչ պետական դերակատարների կողմից կենսաբանական գենի ձեռքբերման և կիրառման հնարավորությունը:

Շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը պատասխանատու է շրջակա միջավայրի աղտոտման մակարդակի գնահատման, դեկոնտամինացման և կենսաբանական թափոնների կառավարման ուղեցույցների մշակման համար: Գործակալությունը սահմանում է կենսաբանորեն վտանգավոր նյութերով աղտոտված տարածքների մաքրման ստանդարտներն ու մեթոդաբանությունը, ապահովում է ջրային համակարգերի, օդի և հողերի անվտանգությունը, ղեկավարում է շրջակա միջավայրի արագ վերականգնման աշխատանքները, ինչպես նաև տեխնիկական աջակցություն է տրամադրում գործադիր և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կենսաբանական միջադեպերից հետո ախտահարված տարածքների անվտանգ շահագործումը ապահովելու նպատակով [10]:

Վետերանների հարցերի դեպարտամենտը, տրանսպորտի դեպարտամենտը, էներգետիկայի դեպարտամենտը, աշխատանքի դեպարտամենտը և գիտության ազգային հիմնադրամը կենսանվտանգության ապահովման ոլորտում ունեն բացառապես աջակցող գործառնություններ և ապահովում են կենսանվտանգության ինստիտուցիոնալ հիմքերի ամբողջականությունը:

Այսպիսով, կենսանվտանգության ապահովման ոլորտում ԱՄՆ քաղաքականությունը հիմնված է ապակենտրոն կառավարման և կոլեգիալ որոշումների կայացման մեխանիզմների վրա, որը բացառում է ոլորտի համար պատասխանատու մեկ գերիշխող մարմնի առկայությունը: Փոխարենը, համակարգը գործում է լիազորությունների տարանջատման տրամաբանությամբ, որտեղ յուրաքանչյուր գերատեսչություն կառավարում է կենսաբանական ռիսկերի՝ իր իրավասությանը վերապահված սեգմենտը:

Ռուսաստանի Դաշնություն

Համաձայն ՌԴ նախագահի 2019 թ. մարտի 11-ի «Քիմիական և կենսաբանական անվտանգության ապահովման պետական քաղաքականության հիմունքները մինչև 2025 թ. և հետագա հեռանկարը» սահմանելու մասին № 97 (փոփոխությունը՝ 24 հունվարի 2025 թ) հրամանագրի, ռազմավարական մակարդակում ՌԴ կենսանվտանգության ապահովման ոլորտում պետա-

կան քաղաքականությունը իրականացվում է հետևյալ մեխանիզմով, մասնավորապես՝

- Ռուսաստանի Դաշնության նախագահը՝ իրականացնում է կենսաբանական և քիմիական անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականության ընդհանուր ղեկավարումը,

- ՌԴ Անվտանգության խորհուրդը՝ մշակում է կենսաբանական և քիմիական անվտանգության ապահովման ոլորտում պետական քաղաքականությունը և վերահսկում դրա իրականացումը,

- ՌԴ կառավարությունը՝ մշակում և իրականացնում է միջոցառումներ կենսաբանական և քիմիական անվտանգության ապահովման ուղղությամբ,

- Կենսաբանական և քիմիական անվտանգության հարցերով կառավարական հանձնաժողովը՝ համակարգում է դաշնային և տարածաշրջանային կառավարման մարմինների աշխատանքը,

- ՌԴ Առողջապահության նախարարությունը՝ համակարգում է դաշնային գործադիր մարմինների համագործակցությունը կենսաբանական և քիմիական անվտանգության ապահովման ոլորտում [7]:

ՌԴ կենսանվտանգության ապահովման ոլորտի գործնական կառավարման համատեքստում թերևս կարևորագույն փաստաթուղթը 2005 թ-ի մայիսի 16-ի (փոփոխությունը՝ 6 հոկտեմբերի 2025 թ) «Դաշնային գործադիր մարմինների լիազորությունների բաժանումը քիմիական և կենսաբանական անվտանգության ապահովման ոլորտում» N 303 ՌԴ կառավարության որոշումն է [6]: Ըստ սույն որոշման, ՌԴ կենսանվտանգության ապահովման ոլորտում ներգրավված դաշնային գործադիր մարմիններն են՝

1. ՌԴ Առողջապահության նախարարություն,
2. ՌԴ Գյուղատնտեսության նախարարություն,
3. ՌԴ Պաշտպանության նախարարություն,
4. ՌԴ քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարություն,
5. ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարություն,
6. ՌԴ բնական պաշարների և շրջակա միջավայրի նախարարություն,
7. ՌԴ արտաքին գործերի նախարարություն,
8. ՌԴ Ներքին գործերի նախարարություն,
9. ՌԴ տրանսպորտի նախարարություն,

10.ՌԴ տնտեսական զարգացման նախարարություն,

11.ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարություն,

12.ՌԴ Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության վերահսկողության դաշնային ծառայություն,

13.ՌԴ Անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայություն,

14.ՌԴ Տեխնիկական և արտահանման վերահսկողության դաշնային ծառայություն,

15.ՌԴ Դաշնային անվտանգության ծառայություն,

16.ՌԴ Բնական պաշարների վերահսկողության դաշնային ծառայություն,

17.ՌԴ իդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի դաշնային ծառայություն,

18.ՌԴ արտաքին հետախուզության ծառայություն,

19.ՌԴ Դաշնային բժշկական և կենսաբանական գործակալություն,

20.ՌԴ Տեխնիկական կարգավորման և չափազիտության դաշնային գործակալություն,

21.ՌԴ Ջրային ռեսուրսների դաշնային գործակալություն,

22.ՌԴ Դաշնային անտառտնտեսության գործակալություն,

23.ՌԴ Պետական պահուստների դաշնային գործակալություն:

Ըստ էության, կենսանվտանգության ապահովման ոլորտում Ռուսաստանի Դաշնությունը նույնպես իրականացնում է ապակենտրոն և կոլեգիալ կառավարում, այսինքն ներառված են բազմաթիվ գերատեսչություններ, առանց որևէ հստակ պատասխանատու մարմնի: Հատկանշական է նաև, որ կենսանվտանգության ապահովման ոլորտի կառավարումը, ըստ փաստացի գործող իրավական ակտերի իրականացվում է քիմիական անվտանգության ոլորտի հետ միասին, ինչը կարելի է ասել փոքր ինչ անտրամաբանական է, քանի որ «Ռուսաստանի Դաշնությունում կենսաբանական անվտանգության մասին» Դաշնային օրենքով կենսանվտանգությունը դիտարկվում է որպես ինքնուրույն ոլորտ:

Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կենսանվտանգության ապահովման համակարգերի ինստիտուցիոնալ նարտարապետության վերլուծությունը վեր է հանում ժամանակակից պետական կառավարման համակարգերին բնորոշ «Գերատեսչական տարանջատվածության» խորքային հիմնախնդիրը: Սա մի իրավիճակ է, երբ կենսանվտանգության՝ որպես բազմաշերտ և միջդիսցիպլինար ոլորտի համապարփակ կառավարումը ստորադասվում է առանձին պետական գերատեսչությունների նեղ ոլորտային շահերին և բյուրոկրատական ընթացակարգերին: Այս պարագայում կենսանվտանգությունը դիտվում է ոչ թե որպես ինքնուրույն, միասնական ռազմավարական ուղղություն, այլ որպես հարակից գործառույթ՝ կցված ավանդական ոլորտներին՝ առողջապահությանը, պաշտպանությանը, գյուղատնտեսությանը, բնապահպանությանը և այլն: Իհարկե կան այնպիսի գերատեսչություններ (օր. Առողջապահության նախարարություն, պաշտպանության նախարարություն և այլն), որոնց պատասխանատվության և լիազորությունների շրջանակը ի համեմատ մյուսների ավելի մեծ է, սակայն չկա առանձին մարմին, որը ամբողջությամբ պատասխանատու է ոլորտում պետական քաղաքականության իրականացման համար:

Նմանօրինակ ապակենտրոնացված մոդելի կիրառումը, թեև պատմականորեն պայմանավորված է պետական ապարատի ֆունկցիոնալ մասնագիտացմամբ, սակայն ժամանակակից հիբրիդային և կենսաբանական սպառնալիքների համատեքստում առաջացնում է համակարգային խոցելիություններ, որոնք էականորեն նվազեցնում են պետության դիմակայունությունը: Առաջնային և ամենավտանգավոր խոցելիությունը կայանում է պատասխանատվության ինստիտուցիոնալ «լողման» մեջ, երբ կառավարման սուբյեկտների բազմազանությունը հանգեցնում է որոշումների կայացման օպերատիվության նվազման և ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխման, քանի որ ճգնաժամային իրավիճակներում յուրաքանչյուր գերատեսչություն՝ լինի դա առողջապահական, ռազմական, թե գյուղատնտեսական, գործում է իր ներքին արձանագրություններով և առաջնահերթություններով: Արդյունքում, կենսաբանական սպառնալիքների վերաբերյալ ամբողջական պատկերը չի հավաքվում մեկ կետում, քանի որ տվյալների մի մասը գտնվում է ռազմական հետախուզության փակ արխիվներում, մյուսը՝ հանրային առողջապահության մոնիտորինգային համակարգերում, իսկ երրորդը՝ գյուղատնտեսությամբ զբաղվող գործակալություններում: Այս երևույթը ստեղծում է տեղեկատվական անջրպետներ և խոչընդոտում է տվյալների փոխանակությանը, ինչը կարևոր նշանակություն ունի կենսաբանական սպառնալիքների վաղ հայտնաբերման և կանխարգելման համար: Այս տեղեկատվական մեկուսացվածությունը հանգեցնում է նրան, որ վտանգի նույնականացման և արձագանքման միջև ընկած լատենտային ժամանակահատվածը անթույլատրելիորեն երկարում է, ինչը պայթյունների էքսպոնենցիալ տարածման պայմաններում հավասարազոր է ռազմավարական պարտության:

Համաճարակաբանության մաթեմատիկական մոդելների և ճգնաժամային իրավիճակներում որոշումների կայացման ժամանակային դինամիկայի վերլուծությունը փաստում է, որ պայթյունները, հատկապես բարձր վարակելիություն ունեցողները, տարածվում են էքսպոնենցիալ օրենքով, մինչդեռ ապակենտրոնացված կառավարման համակարգերը գործում են գծային և հաջորդական տրամաբանությամբ, ինչը ստեղծում է կրիտիկական ժամանակային խզում [15]: COVID-19 համաճարակի էմպիրիկ տվյալները ցույց են տալիս, որ այս խզումը ուղղակիորեն կորելացվում է մահացության և տնտեսական կորուստների ծավալների հետ: Օրինակ՝ Կոլումբիայի համալսարանի կողմից իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ եթե ԱՄՆ-ում, որտեղ առկա էր կառավարման խիստ ֆրագմենտացիա, սահմանափակող միջոցառումները կիրառվեին ընդամենը մեկ շաբաթ շուտ (ինչը հնարավոր կլիներ կառավարման միասնական կենտրոնի առկայության դեպքում), ապա 2020 թվականի մայիսի դրությամբ հնարավոր կլիներ խուսափել մահվան դեպքերի շուրջ 36,000-ից (ընդհանուրի՝ 35%-ից), իսկ երկու շաբաթ շուտ արձագանքման դեպքում՝ մահացության ցուցանիշը կնվազեր գրեթե 84%-ով: Հակառակ դրան, այն երկրները, որոնք ունեին կենտրոնացված կառավարման ինստիտուցիոնալ մեխանիզմներ (օրինակ՝ Թայվանը կամ Հարավային Կորեան), վաղ արձագանքման շնորհիվ կարողացան ապահովել մահացության ռեկորդային ցածր ցուցանիշներ (Թայվանում 2020թ.-ին մահացությունը 1 միլիոն բնակչի հաշվով կազմում էր 0.3, մինչդեռ ԱՄՆ-ում՝ ավելի քան 900): Կառավարման Ապակենտրոնացված համակարգերում տեղեկատվությունը հոսում է տարբեր խողովակներով՝ ենթարկվելով աղավաղումների և ուշացումների, ինչը անհնարին է դարձնում ճշգրիտ կանխատեսողական մոդելավորումը համաճարակի սկզբնական փուլում [8]: Հակառակ սրան, կառավարման կենտրոնացված համակարգերը հնարավորություն են տալիս մեկտեղել առողջապահական, սահմանային և ոստիկանական տվյալները, ինչը օրինակ Հարավային Կորեայում թույլ տվեց բույսերի ընթացքում իրականացնել կոնտակտավորների նույնականացում՝ նվազեցնելով վարակի վերարտադրության թիվը մինչև 1-ից ցածր մակարդակ՝ առանց տոտալ լոք-դաունների:

Հարկ է նշել նաև, որ Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների վերլուծությունը ցույց են տալիս, որ այն երկրները, որոնք կիրառեցին արագ, կենտրոնացված և խիստ միջոցառումներ, երկարաժամկետ կորվածքով կրեցին ավելի քիչ տնտեսական վնասներ, քան այն երկրները, որոնք

տատանվում էին տարբեր գերատեսչությունների հսկասական առաջարկների միջև: Մի շարք երկրների փորձը ցույց տվեց, որ կենսամոլանգության ապահովման ոլորտում կենտրոնացված կառավարումը ճգնաժամային իրավիճակներում դառնում է տնտեսական կայունության ցուցիչ՝ թույլ տալով արագ մեկուսացնել վարակի օջախները և վերականգնել տնտեսական ակտիվությունը [9]:

Բացի այդ, ռազմական և քաղաքացիական կառույցների միջև առկա մշակութային և օպերատիվ տարբերությունները՝ գաղտնիության ռեժիմի և հանրային հաշվետվողականության հակադրությունը, հաճախ հանգեցնում են կառավարչական կոնֆլիկտների և բյուջետային ռեսուրսների կամ քաղաքական ազդեցության համար մղվող ներքին պայքարի, որտեղ գերատեսչական շահերը հաճախ գերակայում են ազգային անվտանգության ընդհանուր շահերի նկատմամբ: Այս երևույթը հանգեցնում է ոչ միայն բյուջետային միջոցների վատնման, այլև առաջացնում է կարգավորման ենթակա «Բաց գոտիներ», որոնք դուրս են մնում որևէ գերատեսչության անմիջական վերահսկողությունից: Օրինակ, երկակի նշանակության հետազոտությունների վերահսկողության պարագայում գիտական գերատեսչությունները կարող են առաջնահերթություն տալ ակադեմիական ազատությանը և նորարարությանը, մինչդեռ անվտանգության մարմինները՝ սահմանափակումներին և գաղտնիությանը [14]: Արդյունքում, այս կոնֆլիկտը հանգեցնում է կամ ոլորտի կարգավորման վակուումի, կամ իրավական կոլիզիաների, որոնք թույլ են տալիս արտաքին դերակատարներին կամ ոչ պետական սուբյեկտներին շահարկել օրենսդրական բացերը:

Այսպիսով, միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ կենսաբանական սպառնալիքների պարագայում կառավարման ապակենտրոն մոդելը գործունակ է միայն կայուն, ոչ ճգնաժամային պայմաններում, երբ խնդիրները կրում են տեղային բնույթ և սահմանափակվում են մեկ գերատեսչության լիազորությունների շրջանակում: Մակայն գլոբալ համաճարակների կամ կենսաբանական ահաբեկչության պարագայում այս մոդելը դրսևորում է իներտություն և անարդյունավետություն՝ տեղեկատվության փոխանակման խափանումների, միջգերատեսչական մրցակցության և որոշումների կայացման դանդաղկոտության պատճառով: Հակառակ դրան, կենտրոնացված կառավարումը, որը ենթադրում է մեկ միասնական պատասխանատու մարմնի կամ կորդինացիոն մեխանիզմի առկայություն, հնարավորություն է տալիս սեղմ ժամկետներում մոբիլիզացնել պետության ողջ ներուժը, ապահովել ստանդարտ-

ների միասնականությունն և համապարփակ վերահսկողություն:

Հետևաբար, ոլորտի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է անցում կատարել կառավարման կենտրոնացված համակարգի պարադիգմին, որտեղ կենսանվտանգությունը դիտարկվում է որպես էկոհամակարգային ամբողջականություն [11]: Այս մոդելը ենթադրում է ոչ թե նոր «Սուպեր-նախարարության» ստեղծում, այլ Ազգային անվտանգության խորհրդին կամ պետության ղեկավարին առնչվող գործող մշտական համակարգող կենտրոնի կամ գործակալության հիմնում, որը օժտված կլինի ոչ միայն խորհրդատվական, այլև իմպերատիվ լիազորություններով՝ համակարգելու բոլոր դերակատարների գործողությունները, մշակելու միասնական ստանդարտներ և ապահովելու տեղեկատվական հոսքերի ինտեգրացիան մեկ միասնական վերլուծական հարթակում: Այս մարմինը պետք է գործի որպես «ուղեղային կենտրոն», որը կկարողանա վերլուծել ռիսկերը միջգերատեսչական կտրվածքով, կանխատեսել սցենարները և ճգնաժամային իրավիճակներում ստանձնել միասնական օպերատիվ կառավարումը՝ շրջանցելով ստանդարտ բյուրոկրատական շղթաները, ինչը թույլ կտա համադրել ուժային կառույցների օպերատիվությունը գիտական հանրային փորձագիտական ներուժի հետ:

Ըստ էության կարելի է փաստել, որ կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարում ժամանակը ամենաթանկ ռեսուրսն է, իսկ կենտրոնացված կառավարումը թերևս ամենաարդյունավետ մեխանիզմը, որը թույլ է տալիս համապատասխանեցնել որոշումների կայացման արագությունը վիրուսի տարածման արագության հետ:

Կենսանվտանգության ապահովման ոլորտի կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության ապահովման ոլորտի իրավաքաղաքական կարգավորման ներկայիս վիճակը բնորոշվում է համակարգային բացերով և ինստիտուցիոնալ անավարտությամբ: Առկա է հայեցակարգային անորոշություն, հստակեցված և ամբողջականացված չեն անգամ «կենսանվտանգություն» եզրույթի բովանդակային ընկալումն ու դրա ընդգրկման շրջանակները: Բացի այդ, իրավական հարթությունում ամրագրված չեն ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, ռազմավարական առաջնահերթությունները, նպատակներն ու խնդիրները [2]: Այս ամենի հետևանքով, ոլորտի կառավարման մեխանիզմները նույնպես կրում են հատվածական բնույթ և կարգավորված են

էական վերապահումներով: Մասնավորապես, ՀՀ վարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 8-ի «կենսանվտանգության և կենսաապահովության հարցերով աշխատանքային խումբ ստեղծելու, դրա կազմը և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1320-Ա որոշմամբ ձևավորվել է աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար (աշխատանքային խմբի ղեկավար)
- ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ
- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
- ՀՀ պաշտպանության նախարարություն
- ՀՀ արտաքին գործերի նախարարություն
- ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
- ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանություն
- ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայություն

Աշխատանքային խմբի նպատակն է Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության և կենսաապահովման ոլորտում անվտանգության ապահովման կատարելագործումը, առկա ռիսկերի գնահատումը, դրա հիման վրա հետագա գործողությունների նախանշումը, պլանավորումը և, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության վարչապետին զեկուցումը:

Սույն որոշմամբ սահմանվել են նաև աշխատանքային խմբի գործառույթները, այն է՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում կենսանվտանգության և կենսաապահովման ոլորտում առկա խնդիրների վերհանում.
- 2) ոլորտին առնչվող մարմիններին միջազգային գործընկերների կողմից ներկայացվող ծրագրերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.
- 3) ոլորտի արդյունավետ գործունեության վերաբերյալ համապատասխան առաջարկությունների մշակում և ներկայացում.
- 4) Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների

մասնակցությամբ քննարկումների կազմակերպում [1]:

Հարկ է արձանագրել, որ թեև սույն որոշումը ՀՀ կենսանվտանգության ոլորտի կառավարմանն առնչվող եզակի իրավական ակտն է, սակայն դրա կարգավորման շրջանակը կրում է խիստ սահմանափակ բնույթ: Խնդիրը կայանում է նրանում, որ որոշմամբ ձևավորված աշխատանքային խումբն օժտված չէ գործադիր լիազորություններով սահմանափակվելով բացառապես խորհրդատվական գործառնությունների իրականացմամբ: Ավելին, թեպետ սույն որոշմամբ ամրագրվել են աշխատանքային խմբի կազմն ու գործառնությունը, այնուամենայնիվ, բացակայում է միջգերատեսչական պատասխանատվության հստակ տարանջատումը: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ կենսանվտանգության ապահովման գործընթացում ներգրավված պետական մարմինների շրջանակը հայտնի է, սակայն նրանցից յուրաքանչյուրի կոնկրետ գործառնության լիազորություններն ու պարտականությունները մնում են անորոշ: Ընդ որում կենսանվտանգության ապահովման ոլորտին առնչվող գործառնություն ամրագրված չեն նաև աշխատանքային խմբի անդամ հանդիսացող գերատեսչությունների կանոնադրություններում, որոնցով սահմանվում են վերջիններիս գործառնությունները: Լավագույն դեպքում սահմանված են պետության անվտանգությանը վերաբերվող շատ ընդհանրական ձևակերպումներ, որոնց համատեքստում գուցե հնարավոր լինի նկատի առնել նաև կենսանվտանգության ոլորտը:

Միաժամանակ հարկ է նաև փաստել, որ կան առանձին մարմիններ, որոնք դուրս են մնացել աշխատանքային խմբի կազմից (օրինակ՝ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնը կամ Առողջապահության ազգային ինստիտուտը, որոնք գործում են ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության ներքո), սակայն իրենց գործունեությամբ, մասնավորապես՝ համաճարակների կանխարգելման համատեքստում, առնչվում են կենսանվտանգության ոլորտին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով կենսանվտանգության՝ որպես երևույթի բազմաշերտությունն ու ընդգրկուն բնույթը, այդ առնչությունը կարելի է գնահատել որպես խիստ միջնորդավորված և մասնակի, հատկապես որ որևէ իրավական ակտով կամ ռազմավարական փաստաթղթով այն ամրագրված չէ:

Եզրակացություն

Այսպիսով, վերոգրյալը ցույց է տալիս, որ կենսանվտանգության ապահովման ոլորտում անցումը դեպի կառավարման կենտրոնացված համակարգի թերևս լավագույն լուծումը կարող է

դառնալ կենսաբանական սպառնալիքների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար: Եթե այս մոդելը փորձենք իմպլեմենտացնել ՀՀ կենսանվտանգության ապահովման համակարգի վրա, ապա դա կենթադրի այնպիսի գերատեսչության ստեղծում, որը «մեկ պատուհանի» սկզբունքով կապահովի ոլորտի միասնական և կենտրոնացված կառավարումը: Առաջարկվող կենտրոնացված մոդելը չի ենթադրում պարզապես մեխանիկական միավորում, այլ նախատեսում է լիազորությունների, ռեսուրսների և պատասխանատվության այնպիսի կոնսոլիդացիա, որը թույլ կտա իրականացնել կենսաբանական ռիսկերի միասնական գնահատում, վերահսկողություն և կառավարում: Ըստ այդմ, անհրաժեշտ է ստեղծել կենսանվտանգության ապահովման ազգային մարմին, որը իր մեջ կընդգրկի կենսանվտանգության ապահովման ոլորտին առնչվող բոլոր գործառնություններն ու գործընթացները, ներառյալ՝ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողությունը, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հետ կապված անվտանգության, հիվանդների բժշկական օգնության և սպասարկման, կենսաէթիկայի, լաբորատոր կենսանվտանգության, կենսատեխնոլոգիական հետազոտությունների կառավարման միասնական պահանջներն ու ընթացակարգերը, ինչպես նաև պետական սահմանի անցման կետերում կենսաբանական գործոնի առնչությամբ պայմանավորված գործընթացները:

Ըստ էության կենսանվտանգության ապահովման ազգային մարմինը պետք է հանդես գա որպես կենսանվտանգության ապահովման ոլորտը կարգավորող և վերահսկող գերագույն մարմին, որը մշակում և ներդնում է կենսանվտանգության ոլորտի միասնական պետական քաղաքականությունը, ապահովում է ազգային օրենսդրության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և սահմանում է կենսաբանական ռիսկերի կառավարման պարտադիր նորմատիվային պահանջներ բոլոր շահագրգիռ գերատեսչությունների համար:

Հարկ է ընդգծել, որ թեև ՀՀ-ում կենսանվտանգության ապահովման ազգային մարմնի ստեղծումը կոչված է լուծելու ոլորտի կառավարման մասնատվածության խնդիրը, այնուամենայնիվ, «Կենսանվտանգություն» հասկացության բազմաշերտությունը ըստ էության բացառում է մեկ գերատեսչության կողմից ոլորտի ամբողջական կառավարման հնարավորությունը: Մասնավորապես, անվտանգային, պաշտպանական, օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական բնույթի գործառնությունները օբյեկտիվորեն դուրս են մնալու այդ մարմնի գործունեության շրջանակներից և պետք է վերապահվեն համապատասխան լիա-

գորություններ ունեցող գերատաստություններին (ԱԱԾ, ԱՀԾ, Ոստիկանություն և այլն):

ՀՀ-ում կենսանվտանգության ապահովման ոլորտի կայացման համատեքստում առանցքային է նաև ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների ձևավորումը: Ակնհայտ է, որ կենսանվտանգության ապահովման ոլորտի կառավարումը չի կարող սահմանափակվել միայն գործադիր իշխանության վարչարարական լծակներով և գերատեսչական նեղ շրջանակներում կայացվող որոշումներով: Այն պահանջում է համակարգային մոտեցում, ինչը հնարավոր է իրագործել այդ թվում նաև խորհրդարանական վերահսկողության գործուն մեխանիզմների ներդրման և դրանց ինստիտուցիոնալացման ճանապարհով: Սա թերևս ենթադրում է ոչ միայն համապատասխան օրենսդրական հենքի ձևավորում, այլև հաշվետվողականության, թափանցիկության և հանրային վստահության այնպիսի մակարդակի ապահովում, որը հատուկ է իրավական և ժողովրդավարական պետություններին և հենց այս գործընթացում է առանցքային դառնում օրենսդիր մարմնի դերակատարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտների մեջ պետք է ներառվի նաև կենսանվտանգության ապահովման ոլորտը՝ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու նպատակով: Ըստ էության, խորհրդարանական վերահսկողության ինստիտուցիոնալացումը ոչ միայն սահմանադրական անհրաժեշտություն է, այլև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգի կայունության ապահովման հիմնարար նախապայման:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ վարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 8-ի N 1320-Ա որոշում, // <https://www.arlis.am/hy/acts/191800/latest>
2. **Վարդանյան, Բ.** Կենսանվտանգության ապահովման ոլորտում ՀՀ պետական քաղաքականության կայացման նախադրյալները. YSU Journal of International Affairs, 2024, 15(3 (45)), 61-71.
3. **Зевелёва Е.А., Кокунов К.А.** Анализ роли политических институтов в формировании стратегий развития технологий для борьбы с пандемиями и биологическими угрозами // Теории и проблемы политических исследований. 2025. Том 14. № 6А. С. 90-107.

4. **Ковалева, Т.** Национальная безопасность и пандемии. Корректировка инструментов обеспечения биобезопасности: характер дискуссий и поиск элементов формулы успеха. Инновации и инвестиции, 2021. (1), 187-192.
5. **Орешенков, А.** Риски биологических угроз и обеспечение безопасности населения (на примере борьбы с новыми пандемиями) // Наука и инновации. 2024. № 7 (257). С. 47-53. 7 с.
6. **Постановление Правительства РФ** от 16 мая 2005 г. N 303 "О разграничении полномочий федеральных органов исполнительной власти в области обеспечения биологической и химической безопасности Российской Федерации"(в ред. от 6 октября 2025 г.) // <https://base.garant.ru/12140131/>
7. **Указ Президента РФ** от 11 марта 2019 г. No 97 «Об Основах государственной политики Российской Федерации в области обеспечения химической и биологической безопасности на период до 2025 года и дальнейшую перспективу» (в ред. от 24 января 2025 г.) // <https://base.garant.ru/72192478/>
8. **Arnaud Jean Orelle et al.**, National Biosafety Management System: A Combined Framework Approach Based on 15 Key Elements. Front. Public Health 2021 Jul 23;9:609107.
9. **Andrea Hodgson et al.**, The US bioeconomy: charting a course for a resilient and competitive future. Ind. Biotechnol. 2022, 18 (3), 115–136.
10. **Biodefense Strategy and Implementation Plan:** For Countering Biological Threats, Enhancing Pandemic Preparedness, and Achieving Global Health Security, White House, october, 2022 // <https://bidenwhitehouse.archives.gov/wp-content/uploads/2022/10/National-Biodefense-Strategy-and-Implementation-Plan-Final.pdf>
11. **David Gillum et al.**, Establishing a national biosafety and biosecurity agency for the United States. Front. Bioeng. Biotechnol. 2024, 12:1474120.
12. **Jon Arizti Sanz et al.**, Biosecurity risks and governance in the age of synthetic biology. MIT Sci. Policy Rev, 2022, 3, 136-42.
13. **Koblentz, G. D.** Biosecurity reconsidered: calibrating biological threats and responses. International security, 2010, 34(4), 96-132.
14. **Paolo Bory et al.**, Rethinking the nexus between science, politics and society in the age of the SARS-CoV-2 pandemic. Tecnoscienza 2021, 12 (2), 140–187.
15. **Sen Pei et al.**, Differential effects of intervention timing on COVID-19 spread in the United States. Science advances, 2020. 6(49), eabd6370.

Сдана / Հանձնվել է՝ 29.01.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 05.02.2026
Принята / Ընդունվել է՝ 12.02.2026